ՀԱՅԱՍՏԱՆ

Հոկտեմբերի 24, 2023

Առանցքային տվյալներ.

101,818
փախստական է եկել Հայաստան

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

4,527 ծածկոց

4,445 անկողնային պարագա

4,108 բարձ

1,367 հիգիենայի հավաքածու

1,169 խոհանոցային հավաքածու

2,472 ներքնակ

Ֆինանսավորում.

14.6 մլն ԱՄՆ դոլար

է պահանջվում 2023-2024 թթ., այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 45%

Պակասող ֆինանսավորում՝ 55%

6.6 մլն ԱՄՆ դոլար

է ստացվել առ 2023 թ. հոկտեմբերի 24-ը

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ

Հոկտեմբերի 20-ի դրությամբ Հայաստանում այս տարվա սեպտեմբերի 24-ից ի վեր 101,848 փախստական է հաշվառվել: Շուրջ 55,000 փախստական դեռեւս բնակվում է կառավարության տրամադրած դատարկ տներում, բնակարաններում, հյուրանոցներում եւ ոչ բնակելի շինություններում: Քանի որ փախստականներից շատերը եկել են գրեթե առանց որեւէ անձնական իրերի, նրանք **անհետաձգելի օգնության** կարիք են զգում, ներառյալ կանխիկ գումարի, կացարանի, ոչ պարենային եւ առաջին անհրաժեշտության պարագաների, ինչպես նաեւ բժշկական եւ հոգեբանասոցիալական աջակցության:

Արձագանքում արտակարգ իրավիճակին

Պաշտպանություն

- Հոկտեմբերի 16-ից 20-ը ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին Ղարաբաղից նոր եկած փախստականներից 303 զանգ է ստացվել: Իսկ սեպտեմբերի 24-ից ի վեր ստացվել է 1,400 զանգ, որի ժամանակ մարդիկ դիմել են ՈՊԱ-ի, սննդամթերքի, կենսապայմանների բարելավման եւ ձմռանը պատրաստվելու հետ կապված հարցերով: Պաշտպանության մշտադիտարկման շրջանակում այցեր են կատարվել Հայաստանի 41 համայնք եւ ՄԱԿ ՓԳՀ-ն զրուցել է փախստականների 95-ից ավել տնային տնտեսությունների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն փախստականներին ուղղորդել է համապատասխան ծառայություն մատուցողների եւ ապահովել, որ հրատապ կարիքներ ունեցող փախստականներն ընդգրկվեն ՈՊԱ տրամադրման ցուցակում:

Փախստականների եւս մեկ ընտանիք ՄԱԿ ՓԳՀ-ից ստացավ օգնություն կենցաղային իրերի տեսքով: Արմավիրի մարզ, հոկտեմբերի 23, 2023 թ.: ©UNHCR/Anahit Hayrapetyan

Ապաստան եւ ոչ պարենային ապրանքներ

- Հոկտեմբերի 16-20-ը ՄԱԿ ՓԳՀ-ն փախստականների շուրջ 550 խոցելի ընտանիքի (1,350 անձ) տրամադրել է 1,364 ծածկոց, 1,001 անկողնային սպիտակեղեն, 978 բարձ, 376 հիգիենայի հավաքածու, 333 ներքնակ եւ 345 խոհանոցային հավաքածու:
- Սեպտեմբերի 30-ից ի վեր Հայաստան են հասել սպասվող բեռնատարներից 26-ը եւ տարբեր մարզերում բնակվող փախստականների 15,000 ՈՊԱ է տրամադրվել: Ակնկալվում է, որ առաջիկա օրերին ՈՊԱ-ներով, այդ թվում ձմեռային բաճկոններով բեռնված ավելի շատ բեռնատարներ կժամանեն Հայաստան:

Համակարգում

Այս տարվա հոկտեմբերի 16-19-ը ՄԱԿ-ի Փախստականների գործակալության Եվրոպայի տարածաշրջանային բյուրոյի տնօրեն Ֆիլիպ Լըկլերկն այցելեց Հայաստան: Այցի շրջանակում նա հանդիպեց ՀՀ կառավարության գործընկերներին, այդ թվում Հայաստանի փոխվարչապետին, Սյունիքի մարզպետին, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին: Հանդիպման ընթացքում Հանձնակատարը դրվատանքով նշեց փախստականների հետ կառավարության համերաշխությունն ու բացառիկ աջակցությունը: Միաժամանակ, նա առանձնացրեց մարդասիրական եւ զարգացման գործընկերների հետ արդյունավետ համագործակցության շարունակականության անհրաժեշտությունը՝ բավարարելու փախստականների կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ կարիքները:

Փախստականներին կենսական աջակցություն ցուցաբերելու նպատակով ՓԿԱԾ ոլորտների ղեկավարները բազմաթիվ միջամտություններ են իրականացրել, այդ թվում սննդամթերք եւ ՈՊԱ տրամադրել, ինչպես նշված է Փախստականների կարիքներին արձագանքման ծրագրի (ՓԿԱԾ) միջգործակալական ընթացիկ ամփոփում թիվ 2-ում, որը ծրագրված է 2023 թ. հոկտեմբերից մինչեւ 2024 թ. մարտ ամսվա համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

www.unhcr.org